



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 24-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 02-Ի ԹԻՎ 03-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը՝

1.1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի քաղաքացիական, քրեական, վարչական գործերի քննության վերաբերյալ ամսական, կիսամյակային (տարեկան), վարչական և քաղաքացիական գործերով վճարման կարգադրություններ արձակելու վարույթների ընթացքի մասին և ստացված միջնորդությունների վերաբերյալ ամսական հաշվետվությունները համաձայն թիվ 1-9 հավելվածների.

1.2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի քաղաքացիական, քրեական, վարչական գործերով վերաքննիչ բողոքների քննության վերաբերյալ ամսական, քաղաքացիական և վարչական իրավահարաբերություններից բխող վճարման կարգադրություն արձակելու վարույթի վերաբերյալ և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության վերաբերյալ ամսական հաշվետվությունները համաձայն թիվ 10-17 հավելվածների.

1.3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի քրեական, քաղաքացիական և վարչական գործերով վճռաբեկ բողոքների քննության վերաբերյալ ամսական, քաղաքացիական և վարչական իրավահարաբերություններից բխող վճարման կարգադրություն արձակելու վարույթի վերաբերյալ և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների քննության վերաբերյալ ամսական հաշվետվությունները համաձայն թիվ 18-23 հավելվածների:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների կողմից ներկայացվող հաշվետվությունների ժամկետ սահմանել՝

2.1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից ներկայացվող ամսական հաշվետվությունների համար մինչև հաջորդող ամսվա 7-ը, կիսամյակային (տարեկան) հաշվետվությունների համար մինչև հաջորդող ամսվա 15-ը.

2.2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի կողմից ներկայացվող ամսական հաշվետվությունների համար մինչև հաջորդող ամսվա 5-ը.

2.3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի կողմից ներկայացվող ամսական հաշվետվությունների համար մինչև հաջորդող ամսվա 5-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի փետրվարի 02-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009թ. հուլիսի 21-ի թիվ 18-Լ որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 03-Լ որոշումը:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

26 դեկտեմբերի 2013թ.
ք. Ստեփանակերտ